Քո մէջքդ է քան զուռ բարակ, քո ծամերդ իջեր բարունակ:
Իմ եա՛ր, երբ զայդ ինձ ասիր, դու ապրի՛ս հազար ժամանակ,
Ես այլ ի աւուրս ի վեր ի ծոցուս անեմ քեզ ճարակ:

Լ Ա.

Փոքրիկ բոլորիկ շամամ, ե՞րբ լինի սիրոյդ տիրանամ.
Քո բէրդ յանատակ ծովուն, ուքեաֆիր ալին պահապան:
Երթամ հաւ մըրտիմ լինիմ, գամ ընկնիմ ի ծովդ ու լողամ,
Այնչափ ելումուտ անեմ մինչեւ քո սիրուդ տիրանամ:

Լ Բ.

Նըման ես ի յայն ոսկին որ Մըսրայ Տէրըն կու պահէ.
Քու ձայնդ ի յերկիր ելեր, զքո խըյմ՛թըդ մարդ չըգիտէ:
Ըզքո խըյմէթդ ես գիտեմ, որ ճիկէրս ի փորս եփեր է.
Սըրտիկս է յաղեղ նըման, գիրկըդ լար է ափըրշումէ:

Լ Գ.

Պաղչայ մի տընկեր եմ ես, թ'ի՛նչ աղէկ մորճեր կայ ի ներս.
Սընուցի 'ւ ի հասք բերի, խըլեցի՛ն զայն ու կուլամ ես.
Ձէտ մանկակորուստ կաքաւ՝ ի լեռներն ի շուրջ կուգամ ես.
Լըսեր եմ ակնատ ունիս, բե՛ր լարէ՛, գամ ընկնիմ ի ներս:

Լ Դ.

Տեսայ զիմ եարըն նըստած, զէտ հազար լուսին բոլորած,
Ձէտ զարեգակըն վառած, զէտ պայծառ աստղըն զարդարած.
Ձոտկունքն ալ ի ջուր եդիր, ըզնըռնայ ձեռքուկն ալ լըւաց,
Կըտուածի թէփսինդըրած, արմաղան դըրած բաժանած:

Լ Ե.

Արեգակն ու պայծառ լուսին, որ կ'ելլեն ի մէկ թապիհէ,
Իմ եարն ի տանէն ի դուսր զերկունքին լոյսըն կու պատլէ:
Նըման այն աստեղն ես դուն որ ամէն առաւօտն ելնէ,
Քիչ քիչ նա ի վեր կուգայ, զբարի լոյսն ի հետ կու բերէ:

Լ Զ.

Իմ սիրտս ի քո վառ սիրուդ զէտ աշնան ղազէլ կու դողայ.
Արտասունք ի յերեսս ի վէր զէտ գարնան անձրեւ կու ցօղայ.
Հոգիս ի յիսնէ ելաւ, մէկ մի քո ծոցոյդ ճար արա՛.